ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ԴՏՊ-1160-11009/Մ»

Քաղ. Երևան «9»«02» 2022թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ը, ի դեմս նախագահ Նաիրա Առաքելյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 3 785 047 (երեք միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար քառասունյոթ) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում: Ծրագիրը իրականցվում է Արմավիրի մարզ Արմավիր քաղաքում՝ ամսական 10 տեսողության խնդիրներ ունեցող (չտեսնող) անձանց համար:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.7 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն << օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել << պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան ֆինանսական առաջարկի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը, պետական մարմին ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N 5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N 2 և 3 հավելվածների, ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում եռամսյակային հաշվետվություն) մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա և 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը: Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական

մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային

օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2022 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. << օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում

պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030666 ՀԿՀՀ 01506013 Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.	*Անվանումը՝* «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ *Հասցեն՝* ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա «*Հայէկոնոմբանկ*» ԲԲԸ Հ/Հ 163108028727 ՀԿՀՀ 04417204 Նախագահ՝ Նաիրա Առաքելյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.

Ռ. Ն. Գրիգորյան

Գ. Բաղդասարյան

Հ. Մկրտչյան

Հավելված 1
2022 թ. «02» «9»-ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Մ պայմանագրի

«ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Համառոտագիր

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում գործում է «Արևածագ» երեխաների աջակցության կենտրոնը, որը սոցիալ-վերականգնողական ծառայություններ է մատուցում Արմավիրի մարզի քաղաքային համայնքների և մի շարք գյուղական բնակավայրերի հաշմանդամություն ունեցող և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին՝ ամսական շուրջ 120 երեխայի:
Հաշմանդամություն ունեցող երեխաների թվում եղել են նաև տեսողության խնդիրներ ունեցող երեխաներ, սակայն չտեսնող երեխաների կենտրոնը ծառայություններ չի մատուցել համապատասխան մասնագետ չունենալու պատճառով: Նրանք հիմանականում ուղղորդվել են Արմավիրի տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոն, որը, սակայն, չի տրամադրում անհրաժեշտ լիարժեք ծառայություններ: Հարկ է նշել, որ մարզում չկան այլ կազմակերպություններ ու կառույցներ, որոնք ծառայություններ են մատուցում այս շահառուներին, իսկ կույրերի միավորումը մարզում վաղուց չի գործում: Թեև այս շահառուները շատ չեն, սակայն նրանք ունեն բազում խնդիրներ, որոնցից առաջինը տարածության մեջ կողմնորոշվելու կարողության կորուստն է: Այս շահառու երեխաների ծնողներ դիմել են «Արևածագ» կենտրոն՝ ծառայություն ստանալու, կամ գոնե համապատասխան կառույց ուղղորդելու ակնկալիքով: Ծառայությունները տեղում բացակայում են, իսկ մայրաքաղաք հասնելը նրանց համար մատչելի ու հասանելի չէ, իսկ տեսողության ֆունկցիայի խորը կամ մասնակի խանգարումը բացասաբար է անդրադառնում երեխաների ճանաչողական և ֆիզիկական զարգացման, շարժողական ոլորտի և տարածական կողմնորոշման ձևավորման վրա:
Առաջարկվող ծրագրի շրջանակներում նախատեսվում է սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց/երեխաներին՝ ամսեկան նվազագույնը՝ 8 շահառուի, 3 մասնագետների կողմից: Ծառայությունները կմատուցվեն ԱԶԿ ՀԿ-ի գրասենյակում, որտեղ առաջին հարկում կա հարամարեցված համակարգչային սենյակ, ինչպես նաև կենտրոնում և շահառուների համար հարմար տարածքներում՝ կախված շահառուների կարիքներից ու կարողություններից, ինչպես նաև տարիքից: ՀԿ-ն ունի նաև մեքենա, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում ապահովել շահառուների տեղաշարժը: Յուրաքանչյուր շահառու կդիտարկվի մասնագետների կողմից: Դիտարկման արդյունքում կկազմվի շահառուի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Մասնագետների գնահատման համաձայն՝ շահառուները կստանան անհարժեշտ ծառայությունն ու պարապմունքները: Շահառուների մասնակցությամբ կկազմակերպվի տարեկան 2 միջոցառում՝ ուղղված շահառուների սոցիալական ներառմանը: Շահառուների հետ, 18-ից ցածրի դեպքում՝ ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ կկնքվի պայմանագիր:

Ծրագրի նկարագրություն

Արմավիրի մարզը, լինելով մոտ մայրաքաղաքին, շատ առումներով ունի զարգացման դանդաղ ընթացք և տարբեր բացեր: Դրանցից մեկը հանդիսանում է տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց ու երեխաների սոցիալական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը: Մարզում չկան այս խոցելի խմբին սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, ու, թեև նրանք շատ չեն, բայց ունեն կարիք ունեն սոցիալ-վերականգնողական ծառայությունների, տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունների զարգացման, ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, տրանսպորտից օգտվելու, անկախ կյանք վարելու հմտությունների կարիք: Նրանք ինչպես քաղաքային,

այնպես էլ գյուղական բնակավայրերից են, ինչն ավելի է դժվարացնում ծառայությունների ստացումը: Ուստի անհրաժեշտ է Արմավիրի մարզում բնակվող տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց ու երեխաներին մատուցել սոցիալական, հոգեբանական և վերականգնողական ծառայություններ՝ ապահովելով վերջիններիս ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, տրանսպորտից օգտվելու իրավունքը, ուսուցանելով և զարգացնելով անկախ կյանք վարելու հմտություններ, նպաստելով նրանց սոցիալ-հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը, սոցիալական ներառմանը հասարակություն:

Կազմակերպության փորձառությունը

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն ստեղծվել է 2005թ.-ին, առաքելությունն է՝ համագործակցություն հանուն սոցիալ-տնտեսական առաջընթացի: ՀԿ-ն իր առջև խնդիր դրել նպաստել մարզի պետական, հասարակական և բիզնես սեկտորների համագործակցությանը:
Կազմակերպության ռազմավարական ուղղություններն են՝
1.Ժողովրդավարական կառավարման թափանցիկ և պատասխանատու համակարգի ամրապնդումը և բարելավումը,
2. Աջակցություն քաղաքացիական հասարակության,
3. Կայուն սոցիալ- տնտեսական առաջընթացի ապահովում:
Կազմակերպությունն իրականացնում է շահերի պաշտպանության, համայնքային զարգացման, երիտասարդական, կանանց, տարեցների հիմնախնդիրների, հաշմանդամություն ունեցող երեխաների, իրավապաշտպան և այլ ծրագրեր Արմավիրի մարզում՝ նպաստելով ժողովրդավարական հասարակության հաստատմանը, քաղաքացիական հասարակության զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը:
ՀԿ-ն 2016թ.-ին «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության ֆինանսավորմամբ Արմավիր քաղաքում հիմնել է «Արևածագ» երեխաների աջակցության կենտրոնը, որտեղ մարզի հաշմանդամություն ունեցող շուրջ 120 երեխա հնարավորություն ունի ստանալ որակյալ սոցիալական և վերականգնողական ծառայություններ: Կենտրոնի տարածքը ՀԿ-ն ձեռք է բերել համայնքների ներդումներով, համայնքային այլ կազմակերպությունների և սեփական միջոցներով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել նաև մեքենա, որը հնարավորություն է տալիս համայնքներից երեխաներին բերել կենտրոն ծառայություններ ստանալու նպատակով:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է՝ ապահովել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց/երեխաներին ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, տրանսպորտից օգտվելու իրավունքը, ուսուցանել և զարգացնել անկախ կյանք վարելու հմտություններ, նպաստել նրանց սոցիալ-հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը, սոցիալական ներառմանը հասարակություն:

Խնդիրներն են՝

- Իրականացնել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց/երեխաների համար սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում,
- Աջակցել շահառուներին հաղթահարելու սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները,
- Ձևավորել և զարգացնել շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունները,
- Նպաստել շահառուների կարողությունների հզորացմանը, հմտությունների զարգացմանը, համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցությանը, ուսուցանել նրանց կարողություններին համարժեք գիտելիքներ, զարգացնել անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողություններ, ինչպես նաև փոխել վերաբերմունքն իրենց խնդիրների և շրջապատում իրենց ունեցած դերի նկատմամբ:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝

- Ամսեկան նվազագույնը 8 շահառուի սույն ծառայությունների նկարագրում նշված պահանջներին համապատասխան ծառայությունների տրամադրում,
- Շահառուների սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված աջակցություն,
- Շահառուների՝ սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների զարգացմանն ուղղված աջակցություն,
- Շահառուների՝ ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունների զարգացմանն ուղղված աջակցություն:

Գործողություններ

- **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում**. Հավաքագրելով տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց և/կամ երեխաների՝ հաշվի առնելով արդեն առկա շահառուների տվյալներն ու հնարավոր նոր շահառուների տվյալները, կիրականացվի շահառուների կարիքների և կարողությունների գնահատում թիմի կողմից՝ սոց.աշխատող, տիֆլոմանկավարժ և համակարգչային դասընթացավար: Գնահատումը կիրականացվի համաձայն ԱՍՀՆ կողմից տրամադրված ձևաչափի: Գործողության արդյունքում կտանանք հստակ նկարագիր յուրաքանչյուր շահառուի կարիքների և կարողությունների վերաբերյալ, որպեսզի դրա հիման վրա մշակվի յուրաքանչյուրի հետ աշխատանքի ուղղություններն ու նպատակները:

- **Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրի մշակում**. Գնահատման արդյունքում թիմի կողմից կմշակվի յուրաքանչյուր շահառուի անհատական սոցիալ-վերականգնողական ծրագիր: Արդյունքում յուրաքանչյուր շահառուի համար կունենանք հստակ պլան, որի հիման վրա կիրականացվեն անհրաժեշտ պարապմունքներն ու ծառայությունները:

- **Ծառայությունների և պարապմունքների նախանշում**. Շահառուների համար կմշակվի ծառայությունների ու պարապմունքների ժամանակացույց: Մասնագետների գնահատման համաձայն՝ կիրականացվի յուրաքանչյուր շահառուի հետ աշխատելու ցանկալի վայրն ու ժամը: Կախված կարիքից՝ դրանք կիրականացվեն ինչպես ԱԶԿ ՀԿ գրասենյակում, այնպես էլ Արևածագ կենտրոնում, ինչպես նաև հենց շահառուների տարածքում՝ նայած, թե ինչպիսի առաջադրանքներ կդրվեն. տրանսպորտից օգտվելու հմտություններ, տարածքի տիրապետում, տեղաշարժվում, գնումների կատարում և այլն: Արդյունքում կունենանք հստակ աշխատանքային ժամանակացույց, որպեսզի մասնագետներն իրականացնեն իրենց աշխատանքները:

- **Շահառուների կամ նրանց ծնողների հետ պայմանագրերի կնքում**. Շահառուների հետ, իսկ 18-ից ցածր լինելու դեպքում՝ ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ կկնքվեն պայմանագրեր՝ անվճար սոցիալական ծառայությունների մատուցման մասին: Շահառուների ծնողները կտեղեկացվեն աշխատանքային ժամանակացույցի մասին: Արդյունքում կունենանք իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև:

- **Ամենօրյա պարապմունքների ու ծառայությունների մատուցում**. Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին կմատուցվեն անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ, կիրականացվեն պարապմունքներ, կվարվեն համակարգչային դասընթացներ: Վերջինս հատուկ ծրագիր է, որով ուսուցանվում է համակարգիչներից ու սմարթֆոներից օգտվելու հմտություններ, ինչը շատ արդիական է հիմա: Բացի այդ կուսուցանվի սպիտակ ձեռնափայտ ծրագիրը, որով հնարավորություն կտրվի կողմնորոշվել տարածքում, շենքի ներսում, դրսում, որը ներառում է նաև շոշափելի տարրական պատկերներ գծելը, շոշափելի քարտեզների կազմելը և կիրառելը, սպիտակ ձեռնափայտի կիրառելը, ինչպես նաև տարբեր ձայնային ազդակների օգտագործումը

կրկին կողմնորոշվելու նպատակով, ինքնասպասարկման հմտությունների զարգացում, ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելուն ֆիզիկապես պատրաստելուն ուղղված միջոցառումներ և այլն: Արդյունքում կհասնենք ծրագրում նշված արդյունքներին յուրաքանչյուր շահառուի համար: Պարբերաբար կվերանայվեն անհատական զարգացման պլանները, կկատարվեն փոփոխություններ, դուրս գրումներ, նոր շահառուների ընդունելություն, գնահատում, և նորերին ծառայությունների մատուցում: Կիրականացվեն նաև սեմինար-հանդիպումներ ընտանիքի անդամների հետ, որոնք միտված են օգնել շահառուների ընտանիքի անդամներին հաղթահարելու իրենց հարազատի ֆիզիկական խնդրի հանդեպ կարծրատիպերը, վերաբերմունքը, վախերը և պատրաստ լինելու աջակցել նրանց ինքնուրույնությունը զարգացնելու հարցում: Կկազմակերպվեն շահառուների մասնակցությամբ տարեկան նվազագույնը 2 միջոցառում՝ ուղղված շահառուների սոցիալական ներառմանը: Ծրագրի ընթացքում ծրագրային գործողությունները, պարապմունքները, աշխատանքները պարբերաբար կլուսաբանվեն սոցիալական ցանցերով, բնականաբար, ունենալով շահառուների համաձայնությունը, մասնավորապես Արևածագի և ԱԶԿ ՀԿ-ի ֆեյսբուքյան էջերում, որոնք ունեն շատ հետևորդներ (https://www.facebook.com/Arevatsag https://www.facebook.com/armavirdc):

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ

Ծրագիր «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում»

Ժամանակահատված 11 ամիս/ 01.02.2022-31.12.2022/

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	
1	Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում/վերագն.	Թիմ	X						X					
2	Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրի մշակում/վերանայում	Թիմ	X						X					
3	Ծառայությունների նախանշում	Թիմ	X						X					
4	Շահառուների կամ նրանց ծնողների հետ պայմանագրերի կնքում	Սոցիալական աշխատող	X						X					
5	Ամենօրյա ծառայությունների մատուցում	Թիմ	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառուներն են հանդիսանում Արմավիրի մարզի քաղաքային և գյուղական համայնքների տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձինք և երեխաները, ամսեկան նվազագույնը՝ 8 մարդ:

Շահառուները կներգրավվեն՝ հաշվի առնելով ՀԿ-ի նախկին փորձը: Ներկայումս մարզում կան բացահայտված շահառուներ, որոնք, սակայն, չունեն համապատասխան ծառայություն ստանալու որևէ ընտրանք, իսկ ԱԶԿ ՀԿ-ն ներառել է տեսողության խնդիրներ ունեցող երեխաների, սակայն ոչ չտեսնող անձանց՝ համապատասխան մասնագետ չունենալու պատճառով: Այս շահառուները, որոնք հիմնականում երեխաներ ու երիտասարդներ են, խորհրդատվական ծառայություններ են ստանում Տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնում, որը, սակայն, լիարժեք ծառայությունների չի կարողանում մատուցել նրանց: Ուստի արդեն կան նախանշված շահառուներ, որոնք կներգրավվեն ծրագրում, սակայն, նրանց թիվը հնարավոր է ավելանա՝ այս շահառուներին ծառայություններով բավարարելու պարագայում, երբ մյուսները կիմանան և կդիմեն, ու կբացահատվեն նոր շահառուներ: Նոր շահառուների ներգրավում կիրականացվի նաև պետական կառույցների հետ համագործակցության արդյունքում, մարզպետարանի սոցիալական վարչության, տեղական սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների հետ համագործակցությամբ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության և ուղղորդման արդյունքում:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի իրականացման էական խոչընդոտներ ներկայումս չեն գնահատվում: Դրանք որոշ չափով կարող են ներառել ներքին քաղաքական իրավիճակն ու ընթացիկ Քովիդ-19 համաճարակը: Դրանց վատթարացման արդյունքում ծրագրային գործողությունները կարող են իրականացվել որոշ դեպքերում առցանց՝ համավարակի սրացման դեպքում:

Համավարակի ռիսկերից խուսափելու համար նախատեսվում է պահպանել առողջապահական բոլոր նորմերը, իսկ սրացումների դեպքում համակարգչային դասընթացներն ու ծնողական հանդիպումները կիրականացվեն փոքր խմբերով՝ հնարավորինս պահպանելով սոցիալական հեռավորությունը:

Ամեն դեպքում, ՀԿ-ն ունենալով տարիների ընթացքում տարբեր ծրագրեր իրականացնելու մեծ փորձ, բախվել է տարբեր իրավիճակների, հետհեղափոխական գործընթացների ու փոփոխությունների, որոնց արդյունքում, սակայն չեն տուժել կազմակերպության իրականացրած ծրագրերն ու դրանց արդյունավետությունը: Ուստի կներդրվեն բոլոր հմտություններն ու կարողությունները՝ նախատեսված գործողություններն իրականացնելու և արդյունքներին հասնելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ900011030666 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.	*Անվանումը՝* «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ *Հասցեն՝* ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա «*Հայէկոնոմբանկ*» ԲԲԸ Հ/Հ 163108028727 ՀՎՀՀ՝ 04417204 Նախագահ՝ Նաիրա Առաքելյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
2022 թ. «02» «9»-ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Մ պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030666 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Գ. Տ.	*Անվանումը՝* «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ *Հասցեն՝* ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա «*Հայէկոնոմբանկ*» ԲԲԸ Հ/Հ 1631080287 27 ՀՎՀՀ 04417204 Նախագահ՝ Նազիրա Առաքելյան (անուն ազգանուն, ստորագրություն) Գ. Տ.

Հավելված N 3
2022թ. «02» «9»
N ԴՏՊ-1160-11009/Մ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 202__ թվականի պետական բյուջեի----------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական միջոցներ	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4100									
Էներգետիկ ծառայություններ	4212									
Կոմունալ ծառայություններ	4213									
Կապի ծառայություններ	4214									
Ապահովագրական ծախսեր	4215									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216									

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն-3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030666
ՀՎՀՀ 01506515
Գլխավոր քարտուղար՝ Վարազդատ Հարությունյան
(անուն ազգանուն, ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Անվանումը՝ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
Հասցեն՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163108028727
ՀՎՀՀ 04417204
Նախագահ՝ Նարիրա Առաքելյան
(անուն ազգանուն, ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
2022թ. «02» «9» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Մ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ. դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Միջոցառման Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Լոտ 1	99999999 /649	«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում»		630.6	946.3	1260.4	1578.4	1892.5	2206.7	2524.6	2838.8	3141.6	3467.1	3785.047	3785.047

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030666 ՀԿՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.	*Անվանումը՝* «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ *Հասցեն՝* ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա «ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ Հ/Հ 163108028727 ՀԿՀՀ 04417204 Նախագահ՝ Նաիրա Առաքելյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.

Հավելված 5
2022թ. «02» «9» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Ե պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030666 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան _____ (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.	*Անվանումը՝* «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ *Հասցեն՝* ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա «*Հայէկոնոմբանկ*» ԲԲԸ Հ/Հ 1631080028727 ՀՎՀՀ 04417204 Նախագահ՝ Նաիրա Առաքելյան _____ (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 6
2022թ. «02» «9» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Մ պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում	Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, տրանսպորտից օգտվելու իրավունքը, ուսուցանել և զարգացնել անկախ կյանք վարելու հմտություններ, նպաստել նրանց	Ծրագրի սկզբում իրականացվում է կարիքների և կարողությունների գնահատում, Գնահատման արդյունքում մշակվում է սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր, Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրում նախանշվում են շահառուի հետ իրականացվող ծառայությունները: Կարիքների գնահատումն իրականացվում է կիսամյակը մեկ անգամ, և ըստ	Ըստ շահառուների թվի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի առկայություն: Շահառուների այցելությունների գրանցում այդ նպատակով պահվող մատյանում: Կազմակերպությունում հաճախումների պլանի /դասացուցակի/ առկայություն: Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի	31.12.2022	Կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպությունը ներկայացնում է ամսական հաշվետվություն և կատարված աշխատանքների արդյունքային որակական ցուցանիշների ապահովման ուղղությամբ եռամսյակը մեկ անգամ տեղեկատվություն է ներկայացնում նախարարություն:	3 785 047 (երեք միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար քառասունյոթ) << դրամ

		սոցիալ-հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը, սոցիալական ներառմանը հասարակություն: Ծրագիրն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից: Ծրագրի շրջանակներում իրականացվում է տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց (այսուհետ՝ շահառու) սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների	անհրաժեշտության կամ ավելի կարճ ժամանակահատվածով հաճախումների դեպքում՝ սկզբում և վերջում: Գնահատումը պետք է իրականացնի կազմակերպությունը՝ ըստ նախարարության հետ համաձայնեցված մեթոդաբանության (կցվում է)::	իրականացման արդյունքում 70% շահառուների մոտ արձանագրել կարողությունների և անկախ կյանքի հմտություններ աճ:		(info@mlsa.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով)	
			Չտեսնող անձանց ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելու, ինքնուրույն կենցաղավարման հմտություններ ուսուցանելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում իրականացվում են՝ • սեմինարներ հմուտ բանախոսների աջակցությամբ, այդ թվում՝ հաջողության հասած հաշմանդամություն ունեցող անձինք, հատուկ մանկավարժներ և այլն).	Զևավորել և զարգացնել շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունները: Նպաստել շահառուների կարողությունների հզորացմանը, հմտությունների զարգացմանը, համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցությանը, ուսուցանել նրանց կարողություններին			

		ուսուցանում և աջակցություն՝ հաղթահարելու սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները: Ծառայությունների տրամադրման կազմակերպումն իրականացվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:	• չտեսնող անձանց ֆիզիկական պատրաստվածություն (չտեսնող անձանց ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելուն ֆիզիկապես պատրաստելուն ուղղված միջոցառումներ. • սեմինար-հանդիպումներ ընտանիքի անդամների հետ, որոնք միտված են օգնել շահառուների ընտանիքի անդամներին հաղթահարելու իրենց հարազատի ֆիզիկական խնդրի հանդեպ կարծրատիպերը, վերաբերմունքը, վախերը և պատրաստ լինելու աջակցել նրանց ինքնուրույնությունը զարգացնելու հարցում. • համակարգչային հատուկ ծրագրերի և կենցաղավարման հմտությունների ուսուցում.	համարժեք գիտելիքներ, զարգացնել անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունները, փոխել վերաբերմունքն իրենց խնդիրների և շրջապատում իրենց ունեցած դերի նկատմամբ: Շահառուների մասնակցությամբ կազմակերպվում է տարեկան նվազագույնը 2 միջոցառում՝ ուղղված շահառուների սոցիալական ներառմանը:			

			• էքսկուրսիաների կազմակերպում. • հատուկ մանկավարժի պարապմունքներ, որոնց նպատակն է մանր և խոշոր մոտորիկայի, լսողական ընկալման, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացումը, հավասարակշռության, ճիշտ կեցվածքի, ճիշտ քայլքի, որոշակի ուղղությամբ անշեղ քայլելու հմտությունների զարգացում. • սպիտակ ձեռնափայտի միջոցով տեղաշարժման ուսուցում, որը ներառում է շոշափելի տարրական պատկերներ գծելը, շոշափելի քարտեզների կազմելը և կիրառելը, սպիտակ ձեռնափայտի կիրառելը:					

			խորհրդատվություն շահառուների ընտանիքի անդամներին:				
	Ընդամենը						

Լրացուցիչ դրույթներ

- Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի տարածքի մատչելիությունը (թեքահարթակ, վերելակ, սանհանգույց, հարմարեցված գույք և այլն), տրանսպորտային միջոցի առկայություն՝ շահառուների տեղափոխումը ըստ անհրաժեշտության կազմակերպելու նպատակով և ունենա մասնագիտական անձնակազմ:
- Նախընտրելի է ծառայությունը մատուցել նաև մարզերում, ուստի մարզերում և Երևանում գործունեություն իրականացնող մի քանի կազմակերպությունների դիմելու դեպքում, նախապատվությունը առնվազն 1 լոտով կտրվի մարզում գործունեություն ծավալող կազմակերպությանը:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030666 ՀԿՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Հ. Տ.	*Անվանումը՝* «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ *Հասցեն՝* ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա «*ՀայԷկոնոմբանկ*» ԲԲԸ Հ/Հ 163108028727 ՀԿՀՀ՝ 04417204 Նախագահ՝ Նաիրա Առաքելյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.